ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№__5257-Ա___ « 24 » դեկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 1788-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի մայիսի 12-ի «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին» N 1788-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝ «Ա.Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոց», «Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց», «Ռաֆայել Վահանյանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Հայկական ազգային կոխ ըմբշամարտի Երևանի մարզաակումբ» և «Շախմատի Երևանի բարձրագույն վարպետության մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվների հ.հ.1-18 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հ.հ.1-18 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի ու սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ